ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.08.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/203

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Մ. Բուատ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Վ. Հայրապետյանի (լիազորագիր՝ տրված 22.07.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 05.08.2021թ. թիվ 26/26-1/12500-2021 գրությամբ «Մ. Բուատ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու)

28.07.2021թ. թիվ ԱՎ/01/08.6/443-21 գրության հիման վրա, 05.08.2021թ. թիվ 26/26-1/12500-2021 գրությամբ նախաձեռնել է «Մ. Բուատ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Մ. Բուատ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Մ. Բուատ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/203 ընթացակարգի շրջանակներում 10.08.2021թ. ժամը 09:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով առարկել է նախաձեռնված ընթացակարգի հիմքերի վերաբերյալ:

3. ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 28.07.2021թ. թիվ ԱՎ/01/08.6/443-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-31» ծածկագրով ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից ճանաչված «Մ. Բուատ» ՍՊԸ-ն հրաժարվել է պայմանագիր կնքել»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/203 ընթացակարգի շրջանակներում 10.08.2021թ. ժամը 09:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2021/203 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2021/203 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իր կարիքների համար շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ են ներկայացրել «Լ.Ն.Մ» ՍՊ և «Մ. Բուատ» ՍՊ ընկերությունները:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.06.2021թ. նիստի թիվ 10 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «Լ.Ն.Մ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.07.2021թ. նիստի թիվ 11 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ ընտրված մասնակցին 24.06.2021թ. ուղարկվել է պայմանագրի նախագիծը, որը պիտի տրամադրվեր Պատվիրատուին մինչև 09.07.2021թ., սակայն ստորագրված պայմանագիր չի ստացվել:

4. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ կետը, որոշում է կայացրել 16.07.2021թ-ից մինչև 20.07.2021թ. անգործության ժամկետ սահմանելու և դրանից հետո հաջորդ տեղ զբաղեցրած «Մ. Բուատ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.07.2021թ. նիստի թիվ 12 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Մ. Բուատ» ՍՊԸ-ին ուղարկվել է ծանուցում 16.07.2021թ., առաջարկելով ներկայացնել կազմակերպության տվյալները և համապատասխան փաստաթղթերը պայմանագրի կնքման նպատակով, սակայն պատասխան չի ստացվել և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը և 6-րդ հոդվածի 1-ն մասի 6-րդ կետի բ) ենթակետը, որոշում կայացրել ընկերության տվյալները ՀՀ ՖՆ ներկայացնելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 05.08.2021թ. թիվ 26/26-1/12500-2021 գրությունը, ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի 28.07.2021թ. թիվ ԱՎ/01/08.6/443-21 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝

1. Մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պետական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում սույն մասով նախատեսված հայտարարությունն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին՝ ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

2. Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

(...)

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

(...)

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ

ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում ***հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:***

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.18-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու (հրաժարվելու) կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը՝ սույն հրավերի 1-ին մասի 8.12-ից 8.19-րդ կետերով սահմանված ընթացակարգի կիրառմամբ:

Այսպես, ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իր կարիքների համար շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ են ներկայացրել «Լ.Ն.Մ» ՍՊ և «Մ. Բուատ» ՍՊ ընկերությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.06.2021թ. նիստի թիվ 10 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «Լ.Ն.Մ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.07.2021թ. նիստի թիվ 11 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ ընտրված մասնակցին 24.06.2021թ. ուղարկվել է պայմանագրի նախագիծը, որը պիտի տրամադրվեր Պատվիրատուին մինչև 09.07.2021թ., սակայն ստորագրված պայմանագիր չի ստացվել:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ կետը, որոշում է կայացրել 16.07.2021թ-ից մինչև 20.07.2021թ. անգործության ժամկետ սահմանելու և դրանից հետո հաջորդ տեղ զբաղեցրած «Մ.Բուատ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.07.2021թ. նիստի թիվ 12 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Մ.Բուատ» ՍՊԸ-ին ուղարկվել է ծանուցում 16.07.2021թ., առաջարկելով ներկայացնել կազմակերպության տվյալները և համապատասխան փաստաթղթերը պայմանագրի կնքման նպատակով, սակայն պատասխան չի ստացվել և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը և 6-րդ հոդվածի 1-ն մասի 6-րդ կետի բ) ենթակետը, որոշում կայացրել ընկերության տվյալները ՀՀ ՖՆ ներկայացնելու վերաբերյալ:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով և կարգով հստակ սահմանված են Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի և քարտուղարի գործողությունների հաջորդականությունը, ինչն իր հերթին հետապնդում է իրավական որոշակիություն ապահովելու նպատակ՝ որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014թ. կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող

համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ:»:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե՛ մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե՛ ներկայում գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Այսպիսով՝ Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին, Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.18-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը, մինչդեռ՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արձանագրությունների ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ ***<u>Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 10.06.2021թ. նիստի թիվ 10 արձանագրությամբ ոչ միայն չի հայտարարել որպես հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից «Մ. Բուատ» ՍՊԸ-ին, այսինքն՝ նշված արձանագրությամբ առկա չէ գնահատող հանձնաժողովի որոշում «Մ. Բուատ» ՍՊԸ-ին հաջորդաբար տեղ զբաղեցրած լինելու վերաբերյալ, այլ նաև առանց «Մ. Բուատ» ՍՊԸ-ին, որպես հաջորդող տեղ զբաղեցրած մասնակից, ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշում կայացնելու, վերջինից պահանջել է ներկայացնել Ընկերության տվյալները և համապատասխան փաստաթղթերը պայմանագրի կնքման նպատակով, որպիսի պահանջ հրավերով սահմանված չէ, այնուհետև՝ 28.07.2021թ. թիվ 12***</u>

արձանագրությամբ արձանագրել է, որ «Մ.Բուատ» ՍՊԸ-ին ուղարկվել է ծանուցում 16.07.2021թ., առաջարկելով ներկայացնել կազմակերպության փվյալները և համապատասխան փաստաթղթերը պայմանագրի կնքման նպատակով, սակայն պատասխան չի ստացվել և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը, այն է՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից, որոշում կայացրել ընկերության տվյալները ՀՀ ՖՆ ներկայացնելու վերաբերյալ, մինչդեռ՝ հարկ եմ համարում արձանագրել, որ Ընկերությանը սույն ընթացակարգի շրջանակներում, ինչպես հետևում է թիվ 11, 12 արձանագրություններից և գործում առկա այլ փաստաթղթերից Պատվիրատուի կողմից պայմանագրի նախագիծը նույնիսկ չի էլ ուղարկվել:

Վերը շարադրված փաստական հանգամանքների ուժով՝ գտնում եմ, որ «Մ. Բուատ» ՍՊԸ-ի նկատմամբ չեն կարող կիրառվել ընտրված մասնակցի կողմից պայմանագիր կնքելուց հրաժարվելու դեպքում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցները, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ Ընկերությունը նախ չի ճանաչվել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից, ինչպես նաև ընտրված մասնակից, հետևաբար նաև չի կրում որպես ընտրված մասնակից որոշակի գործողություններ իրականացնելու պարտավորություն, ուստի «Մ. Բուատ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 05.08.2021թ. թիվ 26/26-1/12500-2021 գրությամբ «Մ.Բուատ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**